II

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԸ ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ (1895–1914 թթ.)

ՍԻԼՎԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ամերիկյան միսիոներության շարժումը դեպի Մերձավոր Արևելք սկսվեց դեռևս 1819 թ. Ջեյմս Մոնրոյի նախագահության օրոք, երբ Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդն Օսմանյան կայսրություն գործուղեց քահանաներ Պլինի Ֆիսկին և Լևի Պարսոնզին՝ միսիոներական գործունեության և բողոքականության տարածման հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով: Բողոքականությունն առաջացել է Եվրոպայում XVI դարում: Քրիստոնեական մյուս ուղղություններից այն տարբերվում է գլխավորապես նրանով, որ առաջադրում է Աստծո հետ մարդու անմիջական կապի գաղափարներ՝ առանց եկեղեցու և հոգևորականության միջնորդության: Հանդես գալով տնտեսապես թույլ զարգացած, գաղութային և կախյալ երկրների ժողովուրդներին «ուսավորելու» և «Աստծո խոսքը» տարածելու կոչով՝ միսիոներությունն իրականում նպաստում էր առանձին պետությունների և սոցիալական խմբերի քաղաքական ու տնտեսական նպատակների իրագործմանը[1]: Սկզբնական շրջանում ամերիկյան միսիոներության գլխավոր նպատակն էր Օսմանյան Թուրքիայի մահմեդականների կրոնափոխությունը, սակայն երբ հայտնի դարձան այդ նպատակին արագ հասնելու դժվարությունները, միսիոներներն իրենց ջանքերն ուղղեցին տեղի քրիստոնյա համայնքների՝ հայերի, հույների, ղպտիների և այլոց «հոգևոր վերանորոգմանը»[2]: Արդեն 1846 թ. հունիսի 25-ին Կ. Պոլսում տեղի է ունենում հայկական միսիոներության ժողովը, որտեղ միաձայն որոշվում է ստեղծել Հայ ավետարանական եկեղեցի: 1846 թ. հուլիսի 1-ին հայ ավետարանականներն ընդունեցին իրենց կանոնադրությունը և նույն օրը Կ.Պոլսի Բերա թաղամասում հիմնվեց բողոքական առաջին եկեղեցին: Եկեղեցու առաջին քահանա ընտրվեց Աբիսողոմ Խաչատուրյանը՝ փոխելով ազգանունը Ութիջյան: 1850 թ. նոյեմբերի 27-ին սուլթանական հրովարտակով բողոքականները ճանաչվեցին կրոնական առանձին համայնք[3]:

Միսիոներների գործունեությունն արևմտահայության մեջ պարարտ հող էր գտնում՝ կապված վերջինիս իրավական, քաղաքական, տնտեսա-

---

[1] *Տե՛ս Ս. Փայասլյան. Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի սկզբից մինչև 1880-ական թվականների կեսերը.– Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006, էջ 4:*

[2] D e N o v o J. American Interests and Policies in the Middle East 1900–1939, Mineapolis, 1963, p. 8.

[3] *«Ավետաբեր» (Կ. Պոլիս), 2.XI.1907, թիվ 44, էջ 1:*

կան ծանր դրության հետ: Անշուշտ, բողոքական շարժման տարածումը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցավ աստիճանաբար, սակայն XIX դարի երկրորդ կեսին այն ձեռք բերեց զանգվածային բնույթ: Դա հատկապես նկատելի դարձավ Խարբերդի նահանգում, ուր Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը 1852 թ. հիմնեց իր ամենամեծ կայաններից մեկը[4]:

Խարբերդի նահանգը գտնվում էր պատմական Հայաստանի Ծոփք նահանգի տարածքում՝ համարվելով «Հայ ժողովրդի բնօրրանի հիմնական տարածքներից մեկը»[5]: Նահանգի տարածքը կազմում էր 37800 կմ: Այն բաժանված էր երեք գավառների (սանջակների)՝ Խարբերդի, Դերսիմի, Մալաթիայի, որոնք էլ իրենց հերթին բաժանված էին 18 գավառակների՝ Խարբերդ-Մեզրե, Արաբկիր, Ակն, Կապան-Մադեն, Մալաթիա, Պեհեսնի, Ադիաման կամ Հյուսնի Մանսուր, Քյախտա, Աղջադաղ, Խոզաթ, Շմշկածագ, Չարսանջակ, Մեծկերտ, Կուզիջան, Օվաճրգ, Բերդակ, Փախ, Կզըլքիսե, և ընդգրկում էին 2443 գյուղ[6]: XIX դարի վերջին հայերը կազմում էին նահանգի 50, քրդերը՝ 27, թուրքերը՝ 22, ասորիները՝ 1 %-ը: Նահանգն ուներ պղնձի, ոսկու, կերակրի աղի հանքեր, հանքային աղբյուրներ: Նահանգում զարգացած էին ինչպես արհեստագործությունն ու առևտուրը, այնպես էլ արդյունաբերությունն ու տնտեսությունը, որոնց մեջ իր ունեցած ներդրումներով աչքի էր ընկնում նահանգի հայ բնակչությունը: Խարբերդում գործում էին Բարիկյան եղբայրների գործիքաշինական, Քյուրքչյան եղբայրների մետաքսի գործարանները, Մեզրեում՝ մետաքսի, Մալաթիայում և Արաբկիրում՝ գործվածքեղենի գործարանները[7]: Պատահական չէ, որ Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Լ. Դեվիսը վկայում է. «Տարածաշրջանի առևտուրը (XIX դարի վերջին և XX դարասկզբում – Ս. Գ.*) հիմնականում հայերի ձեռքում էր, ըստ էության հայերն էին նաև դրամատների տերերը, բժիշկները, ատամնաբույժները, կոշկակարները և կենցաղում խիստ անհրաժեշտ մյուս արհեստավորները»[8]:*

Վերոբերյալ գործոններն էլ պատճառ հանդիսացան, որպեսզի XIX դարավերջին ու XX դարասկզբին Օսմանյան Թուրքիայում և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանում գործունեություն ծավալած ամերիկյան բողոքական միսիոներներն իրենց ուշադրությունը կենտրոնացնեն Խարբերդ նահանգի բնակչության շրջանում տարվող քարոզչական աշխատանքներին: Նկատենք, որ XIX դարի վերջերից Խարբերդում գործունեություն էին ծավալել նաև գերմանացի միսիոներները: 1897–1903 թթ. ընթացքում գերմանական միսիոներական կայանն ուներ որբանոցի 5 շենք, աղջիկների համար դպրոցի շենք, նորակառույց հիվանդանոց, արհեստանոցներ և հանգստյան տուն[9]: Այդ ժամանակահատվածում Խար-

---

[4] R. H e w s e n. Armenia: A Historical Atlas, Chicago and London, 2011, p. 197.

[5] R. H o v h a n n i s i a n. Armenian Tsopk. Kharpert, California, 2002, p. 28.

[6] R. H e w s e n. *Նշվ. աշխ., էջ 40:*

[7] B l i s s R e v. E. Turkey and the Armenian Atrocities, Frezno, California, 1982, p. 427.

[8] *Լ. Դ ե վ ի ս. Սպանդի նահանգը. Ամերիկյան դիվանագետի զեկուցագրերը հայկական ցեղասպանության մասին, 1915–1917 թթ., Երևան, 2001, էջ 124:*

[9] *Տե՛ս նաև Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Հայաստանի օգնության գերմանական միության հիմնումը և նրա առաջին քայլերը Մեզրեում (1897–1908 թթ.).– ՊԲՀ, 2013, -1, էջ 60:*

բերդում փոքր կայան ունեին նաև ֆրանսիական կապուցիները և Անարատ Հղության կաթոլիկ հայ քույրերը: Այսպիսով, կարելի է ասել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Խարբերդը հայտնվել էր օտարերկրյա միսիոներների գործունեության կիզակետում, որոնց միջև մրցակցությունը, նրանց կողմից ձեռնարկված լուսավորական և բարեգործական աշխատանքներն ինքնաբերաբար նպաստեցին Խարբերդի տնտեսական ու կրթական կյանքի աշխուժացմանը: XIX դ. առաջին կեսին Խարբերդում գործունեություն ծավալած առաջին ամերիկացի միսիոներներից պատվելի Ջ. Դանմորի կարծիքով Խարբերդը կայսրության ամենախոստումնալից միսիոներական դաշտն էր[10]*:*

Միսիոներական գործունեության ամենաարդյունավետ ոլորտը լուսավորությունն էր, որի շնորհիվ միսիոներական ցանցը կարողանում էր ամրապնդվել ու ընդլայնվել՝ համալրելով բողոքականությանը հարողների շրջանակը, ուստի կարճ ժամանակամիջոցում ամերիկյան առաքելությունը Թուրքիայում չորս աստվածաբանական ճեմարան հիմնեց. Մարզվանում՝ արևմտաթուրքական, Խարբերդում՝ արևելաթուրքական, Մարաշում՝ կենտրոնական: Չորրորդ ճեմարանը, որ Մարդինում էր, պետք է ապահովեր հարավարևմտյան շրջանը, որտեղ արաբախոս բնակչություն կար: Ամերիկյան միսիոներների կողմից 1878 թ. Խարբերդում հիմնվեց «Արմենիա» քոլեջը, որը 1888 թ. վերանվանվեց «Եփրատ քոլեջ»[11]*: Հարկ է նշել, որ քոլեջն իր գործունեության ողջ ընթացքում վիթխարի նշանակություն է ունեցել արևմտահայերի կրթական կյանքում: Քոլեջի հիմնադիրն ու առաջին նախագահը վերապատվելի Քրոզբի Հուիլն էր: Հետագա տարիներին քոլեջը ղեկավարել են միսիոներներ Հենրի Ռիգզն ու Ջեյմս Բարտոնը, որը Խարբերդ էր եկել 1885 թ.: Քոլեջն ուներ 6 մեծ և 14 փոքր շենքեր, որոնցից՝ 2 մեծ շենքեր աղջիկների համար: 1902 թ. քոլեջի տարբեր բաժիններում սովորում էր 1100 աշակերտ*[12]*: 1913–1914 թթ. «Եփրատ քոլեջի» վարչական ժողովի նախագահն էր բժիշկ Հենրի Ատկինսոնը, քարտուղարը՝ Մերի Ռիգզը: «Եփրատ քոլեջն» ուներ նաև մանկավարժական ճյուղ, որը մինչև 1914 թ. ունեցել է 38 շրջանավարտ: Քոլեջին կից բացվեց մանկաբարձական բաժին՝ 8 հայ ուսանողուհիներով*[13]*:*

Միսիոներների ծավալած լուսավորական գործունեության արդյունքում Խարբերդի նահանգում արդեն 1898 թ. տարեկան հաշվետվության համաձայն՝ գործում էին առաքելության 63 դպրոցներ՝ 4000 աշակերտներով, իսկ 1910–1914 թթ. գործում էին 3 միսիոներական քոլեջ, 1 աստվածաբանական դպրոց, 5 ճեմարան, բազմաթիվ վարժարաններ, նախակրթարաններ ու մանկապարտեզներ: 1898–1901 թթ. ուսումնական կրթարանների սովորողների ընդհանուր թիվը 35000 էր, որից 28000-ը՝ հայեր: Հատ-

---

[10] *Տե՛ս* Great Need over the Water, The Letters of Thereza Huntington Ziegler, Missionary to Turkey, 1898–1905, edited by Stina Katchadourian , Gomidas Institute, Michigan, 1999, p. 51; *Յիշատակարան Եփրատ գոլէճի, Պոսթն, 1947, էջ 37:*

[11] *Յիշատակարան Եփրատ գոլէճի, էջ 118–119:*

[12] R e v. J. G r e e n e. Leaving the Levant, Boston, New York, Chicago, 1916, p. 221.

[13] *Մ. Ճ ի զ մ ե ճ յ ա ն. Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը, Նյու Յորք, 1959, էջ 401:*

կապես նշանավոր էին Խարբերդ և Մեզրե քաղաքների քոլեջներն ու վարժարանները[14]:

Միսիոներների նախաձեռնությամբ բացվող դպրոցները և դրանց բարեկարգ վիճակը, ինչպես նաև թուրքական կառավարող շրջանների թույլտվությունը, նպաստում էին դրանց ցանցի ընդլայնմանը: Թուրքական կառավարող շրջաններն ի դեմս միսիոներական դպրոցների տեսնում էին կարևոր օջախներ հայ ժողովրդի միասնությունը պառակտելու և դավանաբանական հակամարտություններն ավելի սրելու համար, իսկ դպրոցական հարմարավետ շենքերը, ըստ էության, հետագայում անցնելու էին թուրքերի ձեռքը՝ իբրև հաստատուն կապիտալ:

Նկատենք, որ ամերիկյան միսիոներների հիմնած դպրոցները դրական ազդեցություն են ունեցել սերունդների վրա և նպաստել են այս կամ այն մասնագիտության մեջ խորանալուն, լեզուների իմացությանը, գիտամանկավարժական և թարգմանական գրականության ստեղծմանը, թեև ընդհանուր ուղղվածությամբ հաճախ մերժվում էր բուն հայկականը: Ընդհանուր առմամբ, միսիոներների կողմից հիմնված ուսումնական հաստատությունների ծրագրերը հիմնականում նույնն էին: Դասավանդվում էին կրոնագիտություն, հայերեն, թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն, թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն, եռանկյունաչափություն, տոմարակալություն, բնագիտություն, հայոց պատմություն, Օսմանյան պետության պատմություն, փիլիսոփայություն, գծագրություն, ֆիզկուլտուրա, երաժշտություն և արհեստ: Դասապրոցեսում հատուկ ուշադրություն էին դարձնում աշակերտների մտածողության զարգացմանը, տալիս էին հարուստ գիտելիքներ: Այսպիսով, նաև ամերիկյան միսիոներների ծավալած կրթական աշխատանքների շնորհիվ հայերի կրթական միջին մակարդակը, գրագիտությունը, անհամեմատ ավելի բարձր էր, քան գերիշխող սունիի մահմեդականների և տիրապետող ազգի՝ թուրքերի մակարդակը թե՛ Օսմանյան կայսրությունում, թե՛ Արևմտյան Հայաստանում՝ չնայած քաղաքական ու սոցիալական բացառիկ անբարենպաստ պայմաններին: Դա են փաստում նաև ճանապարհորդ Ջորջ Հեփվորթի հուշերը, որը 1897 թ. շրջելով կոտորածի վայրերով՝ գրում է. «Թուրքը չափազանց մեծ նախանձով է լցված հայի մտավոր գերազանցության, զարգացման և ձեռներեցության նկատմամբ»[15]:

Կրթական-լուսավորական աշխատանքների հետ մեկտեղ միսիոներական աշխատանքի մի կարևոր մաս էին կազմում բարեգործական ձեռնարկումները, որոնց շնորհիվ Խարբերդի հայ բնակչության շրջանում մեծանում էր ամերիկյան բողոքական միսիոներների հեղինակությունը: Բարեգործական աշխատանքների համար նոր ասպարեզ բացվեց հատկապես 1895–96 թթ. համիդյան ջարդերից հետո, որոնք արյունոտ հետևանքներ ունեցան Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում: Մեծ կորուստներ կրեց նաև Խարբերդը: Ըստ Ռ. Բլիսի՝ միայն 1895 թ. հոկտեմբերի կոտորածներից հե-

---

[14] *Ն. Գ ի ն ո ս յ ա ն. Հայերի ներդրումն Օսմանյան կայսրության տնտեսական և մշակութային կյանքում XIX դարի վերջում և XX դարի սկզբում.– Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2012, էջ 74:*

[15] G. H e p w o r t h. Through Armenia on Horseback, New York, 1898, pp. 339–340.

տո նահանգի բնակավայրերում սպանվել է 24724 մարդ, սովից, ցրտից ու վախից մահացել է 3119 հոգի, ևս 3860-ը սպանվել ու մահացել են բնակավայրերից դուրս: Ընդամենը կոտորածներին զոհ է գնացել 32801 մարդ, 3750-ը առևանգվել էին, 14844-ը՝ բռնի իսլամացվել[16]: 1896 թ. սեպտեմբերի 3-ի իր տեղեկագրում ամերիկացի միսիոներ Դ. Գեյթսն էլ գրում է. «Այն դաշտում, որի կենտրոնում Խարբերդն էր, կային ավելի մեծ թվով ավերված քաղաքներ ու գյուղեր, քան ուրիշ վայրերում... Մարդիկ դեռ երկար ժամանակ ոչ միայն անօգնական էին, այլև՝ հուսահատ»[17]:

Խարբերդում և ընդհանրապես Արևմտյան Հայաստանում ջարդերից տուժած քրիստոնյա բնակչության համար ծանր հարված էր հարկերի գանձումը: Պաշտոնյաները մեծ եռանդով հարկեր էին գանձում՝ կանգ չառնելով ոչնչի առջև: Սա այն դեպքում, երբ շատերն ընդհանրապես հողատարածք չունեին, ուստի նաև՝ բերք: Տուրքերի գանձումը կոտորածներից մեծապես տուժած, գրեթե ամբողջությամբ թալանի ենթարկված հայկական բնակավայրերից անհանգստացնում էր նաև օտարերկրյա հյուպատոսներին ու միսիոներներին, որոնք դիմում էին կուսակալներին՝ տուրքերի գանձումը հետաձգելու խնդրանքով: Սակայն դա ոչ միշտ էր օգնում հայ բնակչությանը. մասնավորապես, Չմշկածագի Մամսա գյուղի հայերից, որոնց 31 տները ամբողջությամբ թալանվել էին, պահանջվում էր վճարել 12000 դուրուշ: 8000 դուրուշը վճարելուց հետո գյուղացիները դիմեցին կայմակամին՝ խնդրելով պարտքի գանձումը հետաձգել[18]: Հարկահավաքի պատասխանը հուսադրող չէր, և խնդիրը լուծվեց հյուպատոսի՝ կուսակալին դիմելուց հետո: Խարբերդում 1896–98 թթ. նպաստի կարիք ունեցողների թիվը հասնում է 100000-ի: Այդ իսկ պատճառով համիդյան ջարդերի տարիներին միսիոներները Խարբերդում ոչ միայն ապաստան ու սնունդ էին տալիս կարիքավոր հայերին կամ որբանոցներում տեղավորում երեխաներին, այլև իրականացնում էին անվճար բժշկական օգնություն, հաճախ նույնիսկ հայերի փոխարեն վճարում էին պետական տուրքերն ու հարկերը: Այսպես, 1897 թ. Աղիամանում ամերիկյան միսիոներները վճարեցին զինվորական ծառայության դիմաց զորակոչի տարիքի հասած հայ տղամարդկանցից գանձվող հարկը[19]: 1895 թ. Չարսանջակում միսիոներներն ապաստան են տալիս 150 հայի, որոնք հեռացել էին իրենց տներից՝ խուսափելու համար թուրքական հալածանքներից: Շտեմարանների պաշարը սպառվելուց հետո միսիոներները, վտանգելով իրենց կյանքը, փորձում են մոտակա բնակավայրերից սնունդ հայթայթել հայերի համար: Երբ վտանգն անցնում է, միսիոներները նրանց ուղեկցում են իրենց տները[20]:

Բերված օրինակները փաստում են նահանգի տարածքում միսիոներների կողմից կատարվող բարեգործական աշխատաքների կարևորության մասին: Բավական է նշել, որ 1895–96 թթ. կոտորածներից հետո Խարբերդի

---

[16] B l i s s R e v. E. Turkey and the Armenian Atrocities, Frezno, California, 1982, p. 445.

[17] R. H a r r i s and H. H a r r i s. Letters from the Scenes of the Recent Massacres in Armenia, London, 1897, p. 198.

[18] *«Նոր կյանք» (Լոնդոն), թիվ 6, 15 մարտ, 1898, էջ 7:*

[19] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 411, ց. 1, գ. 226, թ. 12:*

[20] *Նույն տեղում, ֆ. 193, ց. 1, գ. 145, թ. 3:*

տարբեր բնակավայրերում միսիոներները որբանոցներում ապաստան տվեցին շուրջ 1000 երեխաների[21]: «Ժողովրդական անասելի թշվառության մեջ միսիոներները շատ էին գտնում հայրեր ու մայրեր, որոնք իրենց սեփական որդուց հրաժարվում էին, իրենց հայտարարությամբ նրանց որբանոց հանձնում»[22]:

Հարկ է նշել, որ միսիոներների այսօրինակ գործունեությունն անհանգստություն էր պատճառում թուրքական իշխանություններին: Պատահական չէ, որ համիդյան կոտորածի օրերին վտանգավոր վիճակում էին հայտնվել նաև ամերիկացի միսիոներները: Տուժեցին նրանցից մի քանիսի տները, որոնք հրդեհվեցին, իսկ միսիոներներն ապաստանեցին «Եփրատ քոլեջի» շենքում: Միսիոներ Է. Լաթիմերը գրում է, որ պլանավորված էր այրել միսիոներների տները և նրանց ընդհանրապես հեռացնել, թեև նախապես թուրք պաշտոնյաները երաշխավորել էին ապահովել միսիոներների ու նրանց շինությունների անվտանգությունը[23]: 1895 թ. ջարդից մեծապես տուժեց «Եփրատ քոլեջը», որի վրա թնդանոթից կրակ բացվեց: Շենքերի մեծ մասը հրդեհվեց[24]: Նկատենք, սակայն, Օսմանյան կառավարությունը հիմնականում խուսափում էր կտրուկ գործողություններ ձեռնարկել միսիոներների նկատմամբ՝ Թուրքիայում ԱՄՆ-ի ունեցած քաղաքական ազդեցության պատճառով: Միևնույն ժամանակ, միսիոներների գործունեությունն ուղղված էր այդ ազդեցության շրջանակների մեծացմանը: Միսիոներական աշխատանքներին հուժկու թափ էր հաղորդում նաև ԱՄՆ հյուպատոսների ներկայությունն Արևմտյան Հայաստանում: Ակնհայտ էր, որ միսիոներներն իրենց լուսավորական - բարեգործական աշխատանքներով հիմք էին նախապատրաստում ԱՄՆ-ի իմպերիալիստական ծրագրերի համար: Ինչպես իրավամբ նշում էր Վ. Տերոյանը, «Տարիների ընթացքում, երբ միսիոներների հիմնարկների կողքին առաջանում էին նաև առևտրական ու տնտեսական զանազան խոշոր ձեռնարկություններ, երբ ընդլայնվում էր բողոքական համայնքը, քաղաքական ասպարեզ էին իջնում նաև հյուպատոսները՝ պաշտպանելու իր պետության և քաղաքացիների շահերը, միջամտելու տեղական ներքին գործերի մեջ»[25]: Խարբերդ եկած ամերիկյան առաջին հյուպատոսը Թոմաս Նորտոնն էր, որը հյուպատոս էր նշանակվել 1900 թ. հունիսին, բայց օսմանյան կառավարությունը հյուպատոսությունը ճանաչեց միայն 1901 թ. հոկտեմբերին: 1905 թ. սեպտեմբեր–1908 սեպտեմբեր ամիսների ընթացքում Խարբերդի ամերիկյան հյուպատոսն էր Էվան Յանգը, 1908 թ. հոկտեմբեր–1914 թ. մայիսի ընթացքում՝ Վիլյամ Մաստերսոնը, 1914 թ. մայիսից 1917 թ. ապրիլը՝ Լեսլի Դեվիսը[26]:

---

[21] W. S t r o n g . The Story of the American Board, Boston, 1910, p. 397.

[22] *Վ. Տ ե ր ո յ ա ն. Իմպերիալիստական ծիծեռնակներ: Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Երևան, 2008, էջ 37:*

[23] E. L a t i m e r. The Last Years of the Nineteenth Century, second edition, Chicago, 1901, p. 172.

[24] *Յիշատակարան Եփրատ գոլէճի, էջ 118:*

[25] *Վ . Տ ե ր ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 40–41:*

[26] *Նույն տեղում, էջ 284:*

Հարկ է նկատել, որ Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեության անմիջական հետևանքը դարձավ Խարբերդի հայության արտագաղթը ԱՄՆ: Արտագաղթողների մեծ մասը քոլեջների, դպրոցների շրջանավարտներ էին, որոնք ԱՄՆ-ում փնտրում էին ազատության, իրավահավասարության, պաշտպանվածության այն մթնոլորտը, ինչի մասին լսել էին իրենց ուսուցիչներից և ինչը բացակայում էր իրենց հայրենիքում: Արտագաղթին մեծապես նպաստում էին նաև ԱՄՆ-ում հաստատված հայերի նամակները, որտեղ վերջիններս խոսում էին Նոր աշխարհի հրաշալիքների մասին: Ընդ որում, եթե սկզբնական շրջանում ԱՄՆ մեկնած հայերը հիմնականում կրթված, առաջադեմ մարդիկ էին, որ գնում էին ուսումը շարունակելու կամ քաղաքական ապաստան ստանալու համար, ապա հետագայում արտագաղթողների մի ստվար մասն արդեն ԱՄՆ էր մեկնում աշխատանք գտնելու նպատակով: Սկզբնական շրջանում արտագաղթողները Խարբերդի դաշտի գյուղերից էին [27]: Փաստ է, որ արտագաղթի հիմնական պատճառը հայերի զանգվածային կոտորածներն էին, նոր ջարդերի տագնապը: Բավական է նշել, որ շուրջ 4000 հայեր Արաբկիրից ԱՄՆ և Եգիպտոս էին գաղթել 1895 թ. կոտորածներից հետո[28]:

Բազմաթիվ խարբերդցիներ ԱՄՆ-ում աշխատող հարազատների ուղարկած գումարներով XX դարասկզբին կարողացան մեծ քանակությամբ հողեր գնել ու դառնալ խոշոր հողատերեր: «1890–1912 թթ. աշխատելով ԱՄՆ-ում՝ Չարսանջակի Հոշե գյուղից Զուռնաճյան եղբայրները կարողացան գումար հավաքել և Բերրիի Հյուսնի բեկից գնել Հոշեի բարեբեր հողերը, թեև դրանք երկար ժամանակ պատկանել էին թուրք աղաներին»[29]: ԱՄՆ գաղթած հայեր նաև աջակցում էին ամերիկյան առաքելության աշխատանքներին: Այսպես, նրանցից մեկը՝ Ասլան Սահակյանը, 15000 դոլարի նվիրատվություն կատարեց կրթական համակարգը զարգացնելու համար, մեկ ուրիշը գումար հատկացրեց Դիարբեքիրում հիվանդանոցի կառուցմանը, ուրիշները նվիրատվություններ արեցին՝ վճարելու Խարբերդի «Եփրատ քոլեջի» պրոֆեսորի աշխատավարձը (1898 թ.), 1899 թ. գումար հատկացրին «Եփրատ քոլեջի» սպորտդահլիճի համար: Քիչ չէին նաև այն մարդիկ, ովքեր, ԱՄՆ-ում գումար աշխատելով, ներդրումներ էին կատարում հայրենիքում: Մասնավորապես, ամերիկյան ապրանքների խանութներ էին բացում և այլն: Այդ ամենի շնորհիվ մեծանում էր ամերիկյան արտադրանքի, հատկապես բամբակե ապրանքների, մետաղե իրերի տարածումը տեղական շուկայում[30]:

ԱՄՆ արտագաղթի ծավալներն աննկատ չէին մնում Խարբերդում ԱՄՆ հյուպատոսարանի, միսիոներական կազմակերպությունների անդամների աչքից, որոնք ևս արձանագրում էին արտագաղթի բացասական հետևանքները: Այսպես, ԱՄՆ հյուպատոս Թ. Նորտոնը 1899 թ. զեկույցներից մեկում հաղորդում է, որ Խարբերդից ու հարակից գյուղերից ոչ

---

[27] R. K e v o r k i a n. The Armenian Genocide. A Complete History, London, New York, 2011, p. 403.

[28] *Նույն տեղում, էջ 405:*

[29] *Գ. Ե ր և ա ն յ ա ն. Պատմություն Չարսանճագի հայոց, Բեյրութ, 1956, էջ 243:*

[30] B. M e r g u e r i a n. The View from the United States Consulate, New York, p. 291.

պակաս քան 200 ընտանիք կամ շուրջ 1000 մարդ, որ կազմում է ԱՄՆ-ի հայության մեկ տասներորդ մասը, նպատակ ունի Ամերիկա մեկնել: Մեկ ամիս անց նա զեկուցում է, որ Նահանգային խորհուրդը որոշում է ընդունել մերժել ԱՄՆ մեկնել ցանկացողներին, քանի որ արտագաղթը «ջջորեն վնասում է նահանգի բնակչությանը»[31]: Միսիոներուհի Թերեզա Հանթինգթոն Զիգլերը՝ 1899 թ. գրում է. «Մենք կրթում ենք երիտասարդներին քոլեջի շրջանառության ընթացքում, իսկ նրանք թողնում են մեզ և մեկնում Ամերիկա, ուր նրանք իրենց անվտանգ են համարում և կարողանում են դրամ վաստակել»[32]: Նույնն է փաստում ամերիկացի քարոզիչ Ջ. Գրինը. «Վերջին ջարդերի ու շատ հայերի՝ Ամերիկա արտագաղթի պատճառով նկատելիորեն նվազել է «Եփրատ քոլեջի» աշակերտների թիվը՝ 1914 թ. կազմելով 611 հոգի»[33]: Ընդհանուր առմամբ, 1900–1910 թթ. Խարբերդից Ամերիկա էր գաղթել 23719 մարդ: Միայն 1913 թ. ԱՄՆ գաղթած 9355 հայերից ավելի քան 1300-ը Խարբերդից էին[34]:

Հարկ է նշել, որ միսիոներները, քաջատեղյակ լինելով նահանգի հայ բնակչության խնդիրներին, բազմիցս փորձել են ամերիկյան կառավարության ուշադրությունը հրավիրել արտագաղթի պատճառների, Խարբերդում և ընդհանրապես Օսմանյան կայսրությունում հայերի անմխիթար կացության վրա: Պատահական չէ, որ նրանք իրենց գերմանական գործընկերների հետ մեծ աշխատանք են կատարել Թուրքիայի հայաբնակ շրջանների հայ բնակչությանը 1895–96 թթ. կոտորածներից փրկելու համար: Հետագայում ամերիկացի միսիոներներ Ք. Աշբրը, Է. Յարոուն և Գ. Կնապը անմիջական մասնակցություն են ունենում Վանի ինքնապաշտպանական մարտերին: Պատահական չէ, որ ամերիկյան միսիոներական հաստատությունների աշխատակիցների հուշերը նաև սկզբնաղբյուրային նշանակություն ունեն Արևմտյան Հայաստանի XIX դարավերջի և XX դարասկզբի պատմության ուսումնասիրման համար: Նկատենք, որ 1895–1898 թթ. Խարբերդի միսիոներական կայանը ամերիկյան դեսպանատուն էր հաղորդում երիտթուրքերի ոճրագործությունների վերաբերյալ տեղեկություններ՝ ճեղքելով իշխանությունների կազմակերպած լրատվական շրջափակումը[35]: Ավելի ուշ՝ 1914 թ., երիտթուրքական իշխանությունները զանազան արգելքներ են հարուցում ամերիկյան միսիոներների առջև, որպեսզի թույլ չտան տեղեկության որևէ արտահոսք արևելյան նահանգներից: Միսիոներներից մեկի կարծիքով, իշխանությունները նման քայլերի էին դիմում, որովհետև «ամերիկացիները պատմում էին Թուրքիայում կատարվող ահավոր երևույթների մասին»[36]: Այսպես, 1896 թ. ամերիկացի միսիոներ Ջ. Փիրսը վկայում էր. «1895 թ. Արևմտյան Հայաստանում կազմա-

---

[31] B. Merguerian. *Նշվ. աշխ., էջ 302:*

[32] *Յիշատակարան Եփրատ գոլէճի, էջ 119:*

[33] Rev. J. Greene. *Նշվ. աշխ., էջ 222:*

[34] *Ք. Ավագյան. Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը, Երևան, 2000, էջ 33:*

[35] *Ռ. Սահակյան. Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան 2005, էջ 20:*

[36] S. E. Moranian. The American Missionaries and the Armenian Question 1915–1927, University of Wisconsin, 1994, p. 11.

կերպված կոտորածից առաջ, նամազի ժամանակ Աբդուլ Համիդը մոլեռանդորեն կոչ էր անում մահմեդականներին անխնա կոտորել հայերին»[37]: Ամերիկյան միսիոներուհի Թ. Ատկինսոնը գրում է, թե 1914 թ. Խարբերդի ամերիկյան հիվանդանոց են բերում մի հիվանդ հայ զինվորի, որը զառանցանքի մեջ անընդհատ կրկնում էր միևնույն նախադասությունը՝ «Հաշվեք հայերին»: «Բժշկական անձնակազմից ոչ ոք ուշադրություն չի դարձնում այս տարօրինակ խոսքերին՝ մտածելով, որ դա կապված է նրա հիվանդության հետ: Զինվորի խոսքի նախազգուշացնող իմաստը պարզ է դառնում, երբ մի գիշեր հերթապահ քույրը կարճ ժամանակով բացակայում է, և շուտով զինվորին գտնում են սպանված. թուրքերը կտրել էին նրա կոկորդը»[38]:

Այսպիսով, ինչպես Խարբերդում, այնպես էլ Օսմանյան կայսրության տարածքում գործունեություն ծավալած միսիոներներն ակամայից հանդիսացան թուրքական իշխանությունների ոճրագործությունների վկան և լուրջ օգնություն ցուցաբերեցին տեղի հայությանը: Միևնույն ժամանակ անժխտելի է, որ միսիոներների քարոզչությունն ու նրանց գաղափարախոսական աշխատանքներն ունեցան նաև բացասական հետևանքներ. ամերիկյան դիվանագիտության նպատակն էր միսիոներների գործունեության շնորհիվ պահպանել և ընդլայնել ԱՄՆ-ի ազդեցությունն Օսմանյան կայսրությունում: Հետևաբար, ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում հետապնդում էր քաղաքական և տնտեսական շահեր, որոնց իրականացումը մեծապես կապված էր միսիոներական աշխատանքի հոգևոր - գաղափարական կողմի ապահովման հետ: Վերլուծելով միսիոներների գործունեությունը Խարբերդում՝ գալիս ենք այն եզրակացության, որ այն, անկախ իր դրական կողմերից, սեպ խրեց բողոքական ու առաքելական հայերի միջև՝ մասնատելով հայությանը գաղափարական և դավանաբանական տեսանկյունից:

АМЕРИКАНСКИЕ МИССИОНЕРЫ В ГУБЕРНИИ ХАРБЕРД (1895–1914 гг.)

СИЛЬВА ГЕВОРГЯЎН

Р е з ю м е

Губерния Харберд считалась одной из самых процветающих территорий в Турции. Не случайно, что одна из самых больших американских миссионерских станций была обоснована именно в Харберде, который, по мнению миссионера Дж. Данмора, был самым многообещающим полем миссионерской деятельности. По годовому докладу 1898 г. в Харберде действовали 63 миссионерские школы с 4000 учениками. В Харберде миссионеры организовали как прос-

[37] *Ա. Կ ի ր ա կ ո ս յ ա ն. Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30 ական թթ.–1914 թ.), Երևան, 1999, էջ 312:*

[38] *Ռ. Ս ա հ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 43:*

ветительные, так и благотворительные работы, в связи с этим и выросло число сторонников протестантской общины. Анализируя деятельность миссионеров в губернии Харберд, приходим к выводу, что она, несмотря на свои положительные стороны, прежде всего отдалила армян-протестантов от армян-апостолов, разделяя их с точки зрения религии и вероисповедания.

THE AMERICAN MISSIONARIES IN THE STATE OF KHARBERD (1895–1914)

SILVA GEVORGYAN

S u m m a r y

The state of Kharberd was considered as one of the most prosperous lands in Turkey. It is no coincidence that the American Board of Foreign Missions' Authorities established one of its largest stations in Kharberd which, from the point of view of American missionary J. Danmor, was the most promising missionary field in the Empire. According to the 1898 annual report there were 63 acting missionary schools with 4000 pupils. Kharberd missionaries did educational, as well as charitable works as a result of which the number of followers of Protestant community in the State increased. Analyzing the missionary activity in Kharberd we come to the conclusion that the missionary activity, regardless of its positive aspects first and foremost drove a wedge between Protestant and Apostolic Armenians dividing them from religious and ideological points of view.